

եւ մի եւ նոյն ժամանակ «աչօքն յառաջ մատուցեալ» խաղերը կը դիտէր, շարունակեւ իր սակաւ սակաւ խմել հեշտօրէն (233): Ուրեմն երես դարձնել չկար այդ դարուն:

26. — Գոռասեր, Վարձակներ, Բոզեր: — Ղեւոնդեանք հազիւ խմեցին ուրախութեան նուագը, «յոտն կացին ի բազմականացն անդ» եւ աղօթեցին. կոչունքը վերջացած էր (Եղիշ. 134): Բնականապէս նորադարձ մոզպետին հոգեւոր յուզմամբ լի տանը մէջ, առաքինի բանտարկեալ իշխանաց, եւ մանաւանդ վաղուի սուրբ մարտիրոսաց կողմանէ ու գաղտնապէս կերուած ճաշ մը չէր կարող աւելի երկար տեւել, եւ ոչ ալ օրինակ հանդիսանալ սովորական խրախճանութեանց, որոնք բնաւ չէին նմանիր աղոր: Անոնց ամենէն զուարթ մասն այժմ կը սկսէր: Հայ ազնուականը գինւոյն հետ երգ ալ կ'ուզէր, որպէս զի իւր հրճուանքը կատարեալ լինէր: Ուստի իսկոյն տաճարը կը մտնէին զուսանք ու վարձակներ. առաջինք՝ այր, եւ վերջինք՝ կին երաժիշտներ, որոց զանազանութիւնն զգալի է՝ բաց յայլոց՝ եւ սա տողին մէջ. «զձայն գոռասնաց եւ վարձակաց» (Բ Թագ. ԺԹ, 35), ուր բնագիրն է «երգչաց եւ երգչուհեաց»: Ասոնց դե-